Հավելված 79

Հաստատված է

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի

2022թ. հուլիսի 28-ի թիվ 3078-Ա որոշմամբ

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

(ծածկագիր 3.1-33)

**1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ առաջատար մասնագետ-օպերատորի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:

Առաջատար մասնագետ-օպերատորին <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետ՝ օրենք/ սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը /այսուհետ՝ քարտուղար/:

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Աշխատակազմի առաջատար մասնագետն-օպերատորն անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

Աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորն իրեն ենթակա աշխատողներ չունի:

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի առաջատար մասնագետը /առաջատար մասնագետներից մեկը/ կամ աշխատակազմի գլխավոր մասնագետը /գլխավոր մասնագետներից մեկը/ աշխատակազմի քարտուղարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող, սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորը աշխատակազմի գլխավոր մասնագետի կամ աշխատակազմի առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ քարտուղարի հայեցողությամբ:

**1.4. Աշխատավայրը**

Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ առաջատար մասնագետ-օպերատորի հիմնական գործունեության վայրն է՝ ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանը:

## 2.ՊԱՇՏՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1 Առաջատար մասնագետ-օպերատորը՝

1)կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,

2)իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին,

3)անհրաժեշտության դեպքում, քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին,

4)անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

5)իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում քարտուղարին,

6)սահմանված կարգով ներկայացնում է կիսամյակային և տարեկան հաշվետվություններ կատարած աշխատանքների վերաբերյալ,

7)ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան,

8)ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը,

9) պարբերաբար ներկայացնում է հաշվետվություն գանձումների վերաբերյալ,

10)իրականացնում է համայնքի հարկային եկամուտների (անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցի հարկ) հաշվառում,

11) կազմակերպում է տեղեկատվական բազայի վարումը,

12)նախապատրաստում և համապատասխան ստորաբաժանումներին է ներկայացնում հարկային պարտավորությունները թերակատարած հարկատուների նկատմամբ՝ օրենքով նախատեսված գանձման համար անհրաժեշտ փաստաթղթերն ու հիմնավորումները,

13)նախապատրաստում է հաշվետվություններ և այլ տեղեկատվական նյութեր և ներկայացնում է համապատասխան մարմիններին,

14)ապահովում է ֆիզիկական և իրավաբանական անձանց /տնտեսվարող սուբյեկտների/ հարկային պարտավորությունների և համապատասխան թույլտվությունների վերաբերյալ ծանուցումների կազմումը,

15)իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի և փոխադրամիջոցների համար սահմանված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի հարկի գանձումը և անշարժ գույքի հարկ ու փոխադրամիջոցի հարկ վճարողների հաշվառումը, ինչպես նաև սպասարկումը,

16)կազմակերպում է համայնքի վարչական սահմաններում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց օրենքով սահմանված թույլտվություն պահանջող գործունեությունների իրականացման համար համապատասխան թույլտվությունների տրամադրման հետ կապված աշխատանքները,

17) կազմում է հարկացրման, հարկատուների, վարձակալների և այլ ցուցակներ,

18)մասնակցում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման գործընթացին,

19) կատարում է համակարգչային, տեքստային /օպերատորական/ աշխատանքներ,

20)կատարում աշխատակազմի ներքին գործավարության, փաստաթղթերի շրջանառության և պահպանման աշխատանքներ:

Առաջատար մասնագետ-օպերատորն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## 3.ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

### 3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Առաջատար մասնագետ-օպերատորը՝

ա)աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) կատարում է քարտուղարի հանձնարարականները.

գ)պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

### 3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

### 3.3. Շփումները և ներկայացուցչությունը

Առաջատար մասնագետ-օպերատորը՝

ա)աշխատակազմի և բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների հետ,

բ) աշխատակազմից դուրս շփվում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ,

գ) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

### 3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

## 4. ՊԱՇՏՈՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**4.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Առաջատար մասնագետ-օպերատորը՝

ա)ունի առնվազն միջնակարգ կրթություն.

**4.2. Մասնագիտական գիտելիքներ և հմտություններ**

ա)ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, և իր լիազորությունների հետ կապված այլ նորմատիվ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

բ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

գ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկականն միջոցներով աշխատելու ունակություն:

դ)տիրապետում է մեկ օտար /կարդում, կարողանում է բացատրվել/ լեզվի:

## 5.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան: